27-ՐԴ ՆԻՍՏ

18 հոկտեմբերի 1918թ.

Նիստը բացվում է երեկոյան ժ. 7-ին, նախագահում է *Ա. Սահակյանը:* Մինիստրական օթյակում են Մինիստր-նախագահը, ներքին գործոց, ֆինանսների և իրավարարության մինիստրները:

Նախագահը կարդում է օրակարգը.

1. Դատաստանական վճիռների հայտարարման ձևի մասին օրինագիծ-վերջնական հաստատում.
2. Դիլիջանի շրջանում խոզակաղին և աճարի պտուղ հավաքելու օրինագիծ-վերջնական հաստատում.
3. Ֆինանսական հանձնաժողովի զեկուցումը կառավարությանը վարկ բաց անելու օրինագծի մասին.
4. Նախահաշիվների մնացորդների ծախսման մասին օրինագիծ -Ա ընթերցում.
5. Մանդատային հանձնաժողովի զեկուցումը պատգամավորների լիազորության մասին.
6. Կառավարության պատասխանները.
7. Պառլամենտական քննիչ հանձնաժողովի զեկուցումը.
8. Ընթացիկ հարցեր:

Ա. Խոնդկարյան - Առաջարկում է օրակարգի Ե կետը քննել առաջին հերթին. ընդունվում է: Սակայն նկատի ունենալով, որ մանդ[ատային] հանձնաժող[ովի] նախագահը այդ րոպեին չուներ իր մոտ հարկավոր թղթերը, որոշում է մինչև այդ թղթերը բերելը խնդիրները քննել օրակարգի մեջ դրված կարգով:

Կարդացվում է դատաստանական վճիռների հայտարարման ձևի մասին օրինագիծը հանձնաժողովի ուղղումներով և ընդունվում է Խորհրդարանի կողմից:

Կարդացվում է Դիլիջանի շրջանում խոզակաղին ու աճարի պտուղ հավաքելու օրինագիծը ուղղումներով և ընդունվում է խորհրդարանի կողմից:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Մանդատային հանձնաժողովի կողմից տալիս է զեկուցում հեռացած պատգամավորների հրաժարականի և նորերի մանդատների մասին: Նաև զեկուցում է նախահաշիվների մնացորդների ծախսման մասին օրինագիծը, տալիս է հանձնաժողովի բացատրություններն այդ առթիվ: Օրինագծի Ա, Բ և Գ ընթերցումը ընդունվում է տեղնուտեղը, որ հետևյալն է. «Նախահաշվով նշանակված ծախքերից ավելացած գումարները բյուջետային տարվա վերջը վերադարձվում են գանձարան»:

Գ. Ենգիբարյան - Պառլամենտական քննիչ հանձնաժողովի զեկուցումը կարդում է և ներկայացնում այն անմխիթար վիճակը, որ ունի էջմիածինն ու շրջակայքը իշխանության անկազմակերպ, ավելի շուտ իշխանության անպատասխանատու գործունեության հետևանքով:

Բժ. Ղազարյան - Շարունակում է հիշյալ հանձնաժողովի զեկուցումը, նյութ ունենալով գաղթականությունն ու որբանոցները և սրանց համար գոյություն ունեցող հիվանդանոցները: Ընդհանուր առմամբ ողբերգական վիճակ ունեն դրանք, միայն համեմատության դնելով, տանելի են քիչ թե շատ Աշտարակի որբանոցներն ու հիվանդանոցները: Աչքի էր զարնում այն, որ բժշկական պարագայքի ու դեղորայքի ճգնաժամ է այդ հիվանդանոցներում:

Ա. Մելիք-Աղաջանյան - Շարունակում է զեկուցումը նույն հանձնաժողովի՝ էջմիածնի և շրջակայքի գաղթականության պարենավորման հարցի առթիվ: Ամենածանր ու խայտառակ կացություն է ստեղծված գաղթականության համար շնորհիվ այն բանի, որ մեխանիզմ չկա գործ առաջ տանող:

Զեկուցումը վերջանալուց հետո տաք վիճաբանություն է սկսվում այն մասին, թե զեկուցումը շոշափող հարցերն ու հանձնաժողովի առաջարկները հենց այսօ՞ր քննվեն խորհրդարանում, թե՞ մնան ուրիշ անգամվա:

Հ. Բուդաղյան - Առաջարկում է՝ այն առաջարկները քննիչ հանձնաժողովի, որոնք պիտի լուծում ստանան, հանձնել համապատասխան հանձնաժողովներին՝ ի մշակումն:

Հ. Ազատյան - Առաջարկում է ոչ մի հանձնարարություն չանել հանձնաժողովներին և զեկուցման մեջ շոշափած բոլոր հարցերի մասին խոսել այստեղ, հենց այսօր:

Եր. Հարությունյան (ժող. կուս.) - Հիմնվելով զեկուցման այն մասի վրա, որ արավ Ենգիբարյանը, քննադատում է կառավարությանը և բոլոր չարիքների պատճառը վերագրում նրան:

Թեր ու դեմ արտահայտվում են այնուհետև *Ս. Խաչատրյան, Ա. Մելիքյան, Ավդալբեկյան.* հարցը քվեարկվում և ընդունվում է:

Ե. Հարությունյան - Շարունակում է իր խոսքը և ժող. կուս. ֆրակցիայի կողմից անվստահություն հայտնելով կառավարությանը, առաջարկում է կազմել կոալիցիոն կառավարություն:

Հ. Ազատյան - Նկատում է, որ չկա իրավակարգ, եղած օրենքները չեն կիրառվում կյանքի մեջ և իբրև միջոց նույնպես առաջարկում է կոալիցիան՝ միայն դեմոկրատ տարրերից: Համագործակցությամբ պիտի գործունեության մի պլատֆորմա մշակել և նոր ապա գործի անցնել: Ամեն կերպ պիտի աշխատել, որ ժողովուրդը դուրս գա այն քաոսից, որի մեջ տառապում է նա այժմ:

Հ. Բուդաղյան - Դատապարտում է այն վերաբերմունքը, որ աջից ու ձախից ցույց է տրվում: Սրանք խոսում են ժողովրդի շահերից: Որտե՞ղ էին դրանք այն միջոցին, երբ նույն այդ ժողովրդի գոյության հարցն էր լուծվում: Ձախից արտահայտվող մենշևիկ սոց. դեմոկրատները ի դեմս վրացական սոց. դեմոկրատների ի՞նչ են արել մեզ համար. չէ՞ որ ամենամեծ չարիքը հենց այստեղից է սկսվում: 60-65 տարեկանները կազմել են մի կուսակցություն-Ժողովրդական կուսակցություն և այն էլ մի տարվա ծնունդ ունի: Ինչպե՞ս այդ մարդիկ իրենց կյանքում նո՞ր են ժողովրդին տեսնում. այդ ժողովուրդը չկա՞ր առաջ: Այժմ, երբ դրությունը մի փոքր տանելի է և նշաններ կան, որ ավելի պիտի պարզվի ու հաստատուն դառնա, ամեն մեկը իրեն ժողովրդի տեր է հայտարարում: Ամբողջ մի ամիս է դաշնակցությունն առաջարկել է կառավարությունը կոալիցիոն դարձնել, սակայն ոչ մի ֆրակցիա չի ընդառաջել այդ ցանկությանը, հիմա էլ այն ձևով են խոսում, որ իբր թե այդ հարցը իրենք են հարուցում ու պահանջ դնում կոալիցիայի:

Ավդալբեկյան - Հանդիմանում է դաշ[նակցական] ֆրակցիային, որ նա արդարացնում է կառավարության, մինչդեռ շատ դաշնակցականներ նույն ձևով քննադատում են կառավարությունը, ինչպես մյուս ֆրակցիաներն առհասարակ:

Այնուհետև մի շարք պատգամավորներ՝ *Խ. Տեր-Ավագյան, Գ. Ենգիբարյան, Ս. Թորոսյան, Հ. Ազատյան, բժ. Ղազարյան, Եր. Հարությունյան և Ա. Մելիքյան,* շարունակում են վիճաբանությունը երկար ժամանակ: Նախագահը հարցը դնում է քվեարկության և խորհրդարանն ընդունում է կոալիցիոն կառավարություն կազմելու առաջարկը:

Մինիստր-նախագահ - Տալիս է բացատրություն Ղարաքիլիսեն, Դիլիջանը, Լոռին ու Փամբակը մի վարչական միավորի վերածելու խնդրի վերաբերմամբ. նկատի ունենալով, որ այդտեղ զինվորական դրություն է հայտարարել կառավարությունը իր իսկ իրավունքով, այդ պատճառով էլ նպատակահարմար է գտել կառավարությունը այդտեղ իշխանությունը հանձնել մի զինվորականի՝ ժամանակավորապես:

Եղան մի շարք հարցումներ ու հարցապնդումներ: Չանցավ այն առաջարկը, որ դպրոցները առայժմ չբացվին և այնտեղ տեղավորեն գաղթականներին: Դրա հակառակ, առաջարկ եղավ՝ սեղմել քաղաքացիներին իրենց բնակարաններում և այդ ձևով տեղավորել անապաստաններին:

Նիստը փակվեց գիշ. ժ. 12-ին:

«Ձանգ», 23 հոկտեմբերի 1918թ.